հրեղէն զօրաք. և եկեալ 'ի զօրացն հանդէպ իմ, կազմեցին աթոռս 'ի վերայ օդոյն, և եկեալ թագաւորն նստաւ. և հնչէին փող յամենայն կողմանց. և սկսան գալ ամենայն ազգ քրիստոնէիցն՝ առաջնորդաւն իւրեանց, և երկիրպագանէին. և թագաւորն ընդունէր և մեծարէր զամենեսեան՝ զլեռնէն. և անցեալ նստէին ամենեքեան: Ապա գայ ազգ մի օտար ի պայծառ լուսով փառաւորեալ, զարմանալի առաջնորդաւն: Եւ յարեաւ թագաւորն ընդ առաջ նորա, և զերկս արկեալ համբուրեաց զնա. և սկսաւ դողել և գոհանալ զնմանէ ասելով, իմ քաջ նահատակ, իմ զուարթ և արթուն և ժիր մշակ, և իմ մեծ և յաղթող սպառազէն, և նըստոյց զնա յաջմէ իւր. և զազգն նորա համբուրէր. և այսպէս հիացեալ և սքանչեալ կային: Իսկ բազմութիւն ժողովոյն որ 'ի վարն էին, զարմացան ընդ յամէլն իմ. և առաքեցին առ իս զառագ որդիս իմ. և նա եկեալ և զնոյն տեսին ետես, և յիմարեալ եկայ և սա. և նոքա յոյժ նեղասրտեալ առաքեցին զկրտսեր որդիս իմ՝ սահիպ մեզ զնալ առ նոսա. և յորժամ եկն ասայն՝ անց տեսին. սակայն մեք պատմեցաք սմա զերան. և ասացին ցիս որդեաս իմ, թէ զի՞նչ կամիս առնել. և ես ասացի, թէ ճանալ կամիմ զՔրիստոս Աստուած՝ թագաւոր փառաց՝ և պարծանք Քրիստոնէից: Եւ առաք որդիս իմ այն հայր, զոյդ ասան, զի սպասանիցին զմեզ և երթեալ խառնիմք 'ի զօրսն թագաւորին Քրիստոսի: Իսկ կրտսեր որդիս իմ ասաց, ոչ է արժան զայդ առնել, զի զմեզ և զամենայն ազգն մեր ջնջին. իսկ դուք ասացէք՝ թէ ամենայն ազգն չէր ('ի) մի պատիւ. այլ երթեալ դասնեմք զսիրելի ազգն, և զաւաջնորդն զայն առաքի, և խառնիմք յազգն յայն մկրտելով 'ի նոցանէ: Եւ մեր հաւանեալ ինքաք և տուաք զհայն ամբոխին. և երթեալ 'ի զիւղն մեր առաք Եւ՝ կարսիր, և երկր գրաստ, և ելաք 'ի զիշերին, և Աստուծոյ եկաք մեք առաս. և տեսաք նշան ինչ 'ի քեզ. զի յԱզգէն Հայոց ես, և էք դուք հաւատարիմ ծառայք թագաւորին Քրիստոսի, զոր տեսաք և մեք կամիմք լինել իրրև զձեզ: Եւ երեկ առաջի իմ զոսկին, և ես ոչ առի. և մկրտեցի զերեքեանն յանուն սուրբ Երրորդութեանն. և բերի յԵրուսաղէմ և հաղորդեցան 'ի սուրբ Լուսաւորչէն. և ասացին, զնամբ յայնկոյս Ծովուն մեծի 'ի պատճառս աղօթիցդ: Եւ այսպէս եղեալ շնորհօքն Քրիստոսի, զոր պատմեաց սուրբ Հայրն Յովհաննէս Գառնեցի:

ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Եթէ Հայք այժմ ունին անցեալ փառաց և պարծանաց մշտատև և փառաւոր կոթող, զայն արժան է հաւատալ իւրեանց քրիստոսական սրբազան Կրօնքը և հաստատուն Եկեղեցին: Իսկ եթէ կան Կրօնից և Եկեղեցւոյ մէջ՝ Հայոց երկարժամանակեայ կսկիծը թեթևացնող, սիրաը մխիթարող և միանգամայն հոգեպարար ուրախութիւն ներշնչող պարագայներ, զայնս պէտք է կրօնական և Եկեղեցական վսեմ արարողութիւնքը և հանդէսքը խմռնալ, յորոց զբաղեալ առաջինը կը հանդիսանայ ,,Կաթողիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի տօնը,,:

Այս տօնը՝ որ Հայը նուիրական իմն սրբազան պարտաւորութիւն չդգայ պաշտել, ըստ որում կը ներկայացնէ նորա Ս. Եկեղեցւոյ վերանորոգութեան և առաւել պայծառ և

յարատև հաստատութեան յիշատակը՝ 'ի ձեռն սրբոյն Գրիգորի Բ. լուսաւորչին Հայաստանեայցս աշխարհի, որոյ և Առաքելական յաջորդութեան և իշխանութեան վերանորոգեալ զահը վերականգնեալ է ասա 'ի Վաղարշապատ ըստ կամաց և առաջնորդութեան Միածնին, յորոյ անուն և կը փայլի ԷՋՄԻԱԾԻՆ։

Ո՜հ, ո՞ւր են մեր անցեալ Աղդային և այլն փառաց հանդէսները. ո՞ւր են երևելի անցից և յաղթական մրցանակաց տօնները. ո՞ւր են նոքա . . . աւա՜ղ, բաւական ժամանակէ 'ի վեր՝ տակաւին չը հանդիսանան, տակաւին կը լռեն . . , բայց Կրօնքը և Եկեղեցին, Կրօնական և Եկեղեցական արարողութիւնքն ու հանդէսքը դեռ կը փայլին և պիտի փայլին մինչև 'ի կատարած աշխարհի. որոց նա և բաղմադարեան վկայն և փառքը պիտի հանդիսանայ Ս. Էջմիածինը(*)։

Ուրեմն Հայք այժմ՝ ունենալով մի միայն Արիստոտական Ս. Կրօնքը և հինաւուրց Կաթողիկէ Էջմիածինը, և նոցա մէջ տեսնելով նախնի փառաց և պարծանաց յաւիտենական յիշատակները և կոթողները, հետևաբար՝ 'ի նոցանէ միայն կընդունին ու կըսպասեն իւրեանց ցաւոց և տրամութեանց մխիթարութիւն և փարատում, ևս հոգևպարար բերկրութիւն։ Ուստի և իրաւամբ նոցա տարեկան տօնը ինչպէս Ս. Լուսաւորիչը սահմանած է, ամենայն Հայկազանց պաշտելի և մեծարելի լինելու անձկալի գոլով, ուրեմն արժանի էր որ այս մասին առաւելապէս Ս. Աթոռոյս միաբանութիւնը նախանձելի օրինակ հանդիսանայը համայն մեր սիրելի Աղգայնոց, քան զարժանն յոյժ շքեղ հանդէսներով կատարելով միշտ ամ ըստ ամէ Կաթողիկէ Եկեղեցւոյս Ս. Էջմիածնի տօնը, ինչպէս նա և այս տարի, անցեալ ամսոյ 22-ին կատարեց խիստ փառաւոր հանդէսներով։

Այսու ամենայնիւ առաւօտեան ժամին

(*) Թէպէտ ցաւօր սրտի սա ևս պէտք է խոստովանիլ, որ սուրբ Էջմիածինը անցեալ ժամանակներէն կրած դէպքերէն այժմ դրեթէ աւերակ եւ ճշմարիտ Աղգաստիրաց սիրտերը ճմլող Քշուառ դրութեան մէջ է նիւթական շէնքով. բայց անշուշտ եմ՝ որ ի շնորհս առատաձեռն նպաստից եւ օգնութեանց արժանաւոր հարց արժանաւոր որդւոց, մեր ամենասիրելի ազգայնոց, նա ևս Վեհափառ Կաթողիկոսի անխոնջ ջանիւք եւ աշխատութեամբ, յետ սակաւուց կրկին կը հասնի նախկին հոյակապ եւ գեղեցկատեսիլ պայծառութեան։

Այո, այս մասին եւ ոչ մի Հայ երբէք անտարբեր զտնուելու չէ։ Վասն զի եթէ կը յիշեմ սուրբ Էջմիածնի անցեալը, եթէ կը յիշեմ մեր արժանայիշատակ նախնեաց դէպ ի նա ունեցած սէրը, հաւատարմութիւնը, ջանքը, ճիգը եւ զոհողութիւնները, որոնցմով նոքա ոչ միայն նիւթականապէս իւրեանց հարստութիւնքը եւ բաղմազգի նպաստները, այլ եւ մինչև անգամ, այո, ի պահանջել հարկին իւրեանց արիւնները չը խնայէին, եւ չը խնայեցին ի սէր, ի փառս ի հաստատութիւն եւ ի պայծառութիւն նորին (Ս. Էջմիածնի)։ Ուստի մեր, որ կը պարծենամք եւ կը փառաւորուիմք այնպիսի նախնեաց որդիքը լինել, մինթէ մեզ բաղդ եւ սրբազան պարտաւորութիւն չը պիտի համարիմք ըստ կարեաց օգնել եւ նպաստել Սուրբ Էջմիածնի այժմեան աւերակ վիճակը, պայծառաշէն դրութեան վերածելու ի պարծանս մեր եւ ի փառաւորութիւն մեր սուրբ Կրօնից եւ Եկեղեցւոյ։

Արդարեւ այս մասին մեր սրբազան պարտքը կատարած միջոցին, պէտք է խմանալ, թէ տակաւին զմեզ արժանայիշատակ նախնեաց արժանաւոր որդիք դասելու համար, այլ ևս ունիմք առաւել բարձր եւ առաւել վսեմ պարտաւորութիւններ, զորս ի պահանջել հարկին ամենայն սիրով հարկ է վճարել։ Ուստի եւ ամեն պարագայի մէջ . . . անմնանաւիրաբար պէտք է զմեզ պատրաստ եւ կազմ պահել, որպէս զի Հայրենիքը, նորա Կրօնը եւ սուրբ Եկեղեցին մինչև ի վախճան աշխարհի բարձր ի գլուխ Քող փայլի եւ յառաջադէմ զարգանայ, ևս սուրբ Էջմիածինը Քող նորա բաղմադարեան վկայն ու փառքը հանդիսանայ պայծառութեամբ եւ ի դրանց դժոխոց անսասանելի հաստատութեամբ։

Գեր. Գ. Լոնդ վարդապետ՝ Պանտրմոյու և Պալը-քէսէրու Առաջնորդը գեղեցիկ մի Ասնարանութիւն խօսեցաւ։

Մաղթանքի ժամանակ Վ. Եհարանին սրահը՝ Արժանապատիւ Տէրտէր Աբեղայ Ջ. Պալեանը խիստ ազդու և պատշաճ մի ճառ ընթերցաւ, զոր ստորև կը հաղորդենք մեր սիրելի Ազգայնոց։

Դաւ սեղանատան մէջ տիրացու Գրիգոր ուրարակիրը մի ուղերձ կարդաց։ Որ յետոյ "կեցցէ"ներ գոչելով հանդիսականք, Ս. Աթոռոյս հաստատութեան և յառաջադիմութեան, և Ազգիս Հայոց լուսաւորութեան և յառաջադէմ բարգաւաճմանց համար՝ բաժակներ քամեցին։

Դոյնպէս փառ կենաց երկարութեան՝ և նպատակաց ու ձեռնարկեալ գործոցն յաջողութեան և արդիւնաւորութեան Վ. Եհափառ Կաթողիկոսի բաժակներ առաջարկուեցան, և սրտաբուղխ "կեցցէ" ձայնից զոռումը, յայտնի կը պարզէր զգայուն և եռանդուն հանդիսականաց համակրութիւնը և սէրը առ Վ. Եհափառ և սրբազնագոյն Կաթողիկոս։

Իսկ երեկոյեան հրավառութեանց հանդիսին գեղեցկութիւնն ևս զմայլելի էր։ Դէ բոլոր ժողովրդին մեծ ուրախութիւն միանգամայն մխիթարութիւն ազդեց։

Ս.

ՄԱՂԹԱՆՔԻՆ ԿԱՐԴԱՑՈՒԱԾ ՃԱՌԸ։

ՎԵՀԱՓԱՌ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏ

Հրաշափառ և երկնահանդէս աւուրս ասնախմբութիւն հաւատի առնէ զայն սրբառեանդն ուրախական զգացմունս, զոր կրէ յինքեան լուութիւն ընդհանրութեան Ազգիս մերոյ՝ միօրինակ, ամենայն ուրեք, վերարկրութեամբ առ սուրբ և առաքելական Եկեղեցին իւր։ Փառ զի՝ ասնէ նա այսօր միահամուռ համագգակցութեամբ զհիմնարկութիւն այնր Տաճարի փառաց սրբութեան, որ Այրն է ամենայն եկեղեցեաց իւրոց, որով և լրութեանն իւրոց։

Դէ ահա այսօր Ազգ մեր և Եկեղեցի կատարելով զայս գերափառազոյն հանդէս հոգևոր ուրախութեան, ասնէ նա այսու զհոգևոր փրկութեան և երջանկութեան իւրոյ զառաջին սկզբնաւորութեան զգիշատակն՝ Աստուածածանութեան և 'ի Քրիստոնէութեան։ Տանէ զշնորհս բարերարին Աստուծոյ, որով 'ի մահուանէ 'ի կեանս և 'ի խաւարէ Հրեանասական տգիտութեան 'ի լոյս վերանորոգեցաւ աշխարհ իւր։ Տանէ՝ զայն փառս և զպարգևս երկնաւորս, որով կեանք մարդկան անօրինեցաւ յուղղութիւն և յարդարութիւն, և զայն երախտիս՝ զոր ընկալաւ նախախնամութեամբն Աստուծոյ, բազմաչարչար նահատակութեամբ սրբոյ Լուսաւորչին իւրոյ, որում փոխարինեաց և եռ 'ի ցոյց երախտագիտութեան իւրոյ և 'ի յայտնել զնշանակութիւն գործոյ նորին՝ զանունս "Լուսաւորիչ"-ուրեմն և զգիշատակ Լուսաւորութեան իւրոյ։ Յիշեցուցանէ Տանահանդէս Հոգևոր, նաև՝ զայն փառաւորութիւն Եկեղեցւոյս մերոյ, որով սուրբ Առաքեալքն Թադէոս և Բարդուղիմէոս անդամին եղեն հիմնարկուք Քրիստոնէութեան 'ի Հայաստան աշխարհի, որ պահեցաւ յապայն արծարծման սրբոյ Հայրապետին, ըստ Դէմանեանին անշիջանելոյն այնուհետև մինչ 'ի սպառ։

Դէ թէ զայս ամենայն յարդարէր անօրէնութիւն վերին Տեսչութեանն, յայտնի իսկ է, զի ոչ կարէր մարդ առնել զդոյնս ինքնին զօրութեամբ անձին իւրոյ։ Ուստի հիմունք սրբոյ Տաճարիս և Եկեղեցւոյս հիմնեալք են 'ի կամն Աստուծոյ, իբրև